պետացն լրդեցաք, միտք թղթոցն և բանք վարդապետացն այս՝ թէ մեր և ձեր բարեկամութիւնն հաստատուն է, այլ այսօր յայսմիկ խոովութեանս ոչ լինի մեր զայն առ ձեզ և թէ՝ դուք զմեզ թղթով միամտեցուցիք յառաջ, և այժմ զնախիրսն մեր ասպատակեցին զօրք ձեր և զքանի անձինս ևս գերեցին. զայնս զարձուսջիք առ մեզ, և մեք զմեր մեծարանսն կամ ասա, կամ ի ձեր տեղիսն ևս կարեմք առնել ձեզ։ Նոքա ասացեալ էին, թէ թող ընծայ յղեսցէ մեզ և մեք զաւարն ժողովեալ՝ տացուք և զայլ զրոյցս անհաստատս։ Եւ մինչդեռ վարդապետքն առ նոսա էին, և մեք յանհնարին տարակուսանս էաք (մտածելով թէ մնացեն անդէն և մարտ կամիցին դնել ընդ պարսպիս, ըստ որում ասա ժողովեալ զինուորքն ևս հրացանս արձակէին առ անցաւորսն զպարսպաւս)։ Ի վերնախնամ տեսչութենէն շրջեցեալ մտաց նոցա, ժողովեցին զվրանսն և ուղևորեցան դէպ ի Սեաւ ջուրն և ի Զէլայ գիւղի ցանդաստանսն իջևանեցան, և շրջակայ զգիւղորայսն և զարդիւնս երկրի հրակիզեցին. զոր ասա ի գիւղս մեր ոչ արարին։ Յետ անցանելոյ նոցա ի պարսպէս, զինուորք եկեալ զե (5) այր կալան ի զօրաց նոցա յետամնացիցն. զորս առեալ պահեցաք փոխանակ նոցին տարեալ երեք անձանցն։ Եւ ի գիշերին մնացեալ նոցա անդ ի Զէլայ՝ յառաւօտուն եկին անտի և գնացին յեղրն Երասխայ։ Բայց ի Զէլայու թուղթ էին գրեալ մեզ վասն կալանաւորացն իւրեանց, թէ զմեր մարդիկն յղեցէք և մեք զձեր գերիսն արձակեսցուք։ Եւ մեք պատասխան գրեցաք, թէ ձեր մարդիկն առ մեզ են և ի մէնջ կորուսանել ոչ լինի. նախ դուք զմերսն յղեսջիք և ապա մեք՝ զձերսն։ Իսկ նոքա զառաջիկայ գիւղորայսն հրակիզեալ և ընդ Բլրու բերդին ևս սակաւ ինչ մարտուցեալ՝ անցին ընդ կեսաւուկն Բայազտոյ և զառաջեաւն Օրթուլուի գնացին ի Մակու, և անդ ևս բազում վնասս և գաւերս գործելով, որպէս լուաք, անցին ի յերկիրսն իւրեանց։

Բայց զգերիսն մեր յանձնեալ էին բլրցւոց՝ հասուցանել մեզ. որոց ի հասանիլն ասա և մեք զնոցա կալանաւորսն արձակեցաք։

Այսպէս եղև զայն նոցա և անցանելն զմեօք և վնասակարութիւն մեր և խղճալի երկրիս՝ որ գրեթէ բան մեծի մասին աւերեցաւ, ոչ միայն ի զօրացն օտարաց, այլ և ի յանզգամացն երկրիս, զորս գիտես։ Եւ ոչ այնչափ միայն, այլ և իշխողն ձեռն արկեալ է ի Վիրս և ի Տայս[13] զօրս բերել յօգնութիւն առ ի գնալ նոքօք ի Նախչուան և ի Խոյ զարձեալ. և ի վրաց ՃԼ (130) մարդ է եկեալ, զորս ի սուրբ Աթոռս և ի գիւղս մեր է յղեալ կերակրիլ, մինչև յետուստ բազմութիւնք գայցեն. բայց անտի այլ ևս զօրաց գալոյ նշան ոչ երևի։ Իսկ ինքն յերկրէս մարդ ժողովէ գնալ։ Առ որ կամք զարմացեալ և տարակուսեալ։ Գոհութիւն Աստուծոյ, որ յայն մեծ փորձութենէն զերծաք, բայց և յապագայից զոչ սակաւ կասկածանս ունիմք, հայելով ի ազգայական շարժմունս սորին։ Տէր տեսցէ և այցելութիւն արասցէ։ Արդ, գիտելով մեր, թէ այլ ընդ այլոյ լսելոց էք զանցիցս և տարակուսելոց, ի սեպտեմբերի ամսոյս Զ (6) զայս պատմութիւնս գրեցաք ի Կարին՝ պարոն Հայրապետին[14] և հարկ արարաք, զի կամ զգրեալսն

[13] Նկատի ունի Ախալցխան, որի փաշան՝ Սուլեյմանը կենտրոնական իշխանության թուլացման հետևանքով անկախության էր ձգտում և այս պատճառով աշխատում էր բարելավել իր հարաբերությունները Հերակլ II-ի, ինչպես նաև նրա հարկատու Մուհամատ խանի հետ։ Վերջինիս կողմից նրանից օգնություն խնդրելու փաստը կապված է Սուլեյման փաշայի այս նոր դիրքավորման հետ։

[14] Էջմիածնի գործակալն էր (վերիալը) Կարինում և մշտական նամակագրություն ուներ կաթողիկոսի հետ։